ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 69070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 20

ԼԱՈՒՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լաուրա Արմենակի Դանիելյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 4-րդ փողոց թիվ 6/1 հասցեի տնամերձ հողամասում (կոդ 07-054-0020-0062) 2008 թվականին ինքնակամ կառուցված շինությունները: Համայնքի էլեկտրոնային քարտեզից, որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերից և տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Լաուրա Արմենակի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Պտղնի 4-րդ փողոց թիվ 6/1 հասցեի տնամերձ հողամասում 2008 թվականին ինքնակամ կառուցվել է 131.33 քմ մակերեսով բնակելի տուն, 7.78 քմ մակերեսով սան. հանգույց և 8.80 քմ մակերեսով պարիսպ:
Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Լաուրա Արմենակի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող 2008 թվականին ինքնակամ կառուցված 131.33 քմ մակերեսով բնակելի տունը, 7.78 քմ մակերեսով սան. հանգույցը և 8.80 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Պարտավորեցնել քաղաքացի Լաուրա Արմենակի Դանիելյանին ինքնակամ կառուցված շինությունների համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 341460 (երեք հարյուր քառասուն մեկ հազար չորս հարյուր վաթսուն) ՀՀ դրամ և 25870 (քսան հինգ հազար ութ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2017 թ. հունիսի 06
գ.Պտղնի